

ԵԱԳՈՒՊԻ ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՒ

ՀԱՅԵՐԸ

(Շար. տե՛ս «Բազմավեպ» 1957, թ. 9-10, էջ 207)

19.

Ապուլ-Ապպաս Աս-Սաֆֆահ եւ Հայերը

Ապուլ-Ապպաս Հայաստանի վրայ կառավարիչ կարգեց Մուհամմատ Իպն Սուլա հոն զնաց մեծ բազմութեամբ՝ մինչ այնտեղ կը տիրապետէր Մուսաֆըր Իպն Քաթիբ 133ին (750), որ Իսհակ Իպն Մասլիմ Ալ-Ուզայլի փոխանորդն էր⁽²⁴⁾։ Մուհամմատ Իպն Սուլ պատերազմեցաւ անոր դէմ, սպաննեց զինքը ու Հայաստանի տիրեց։ Փայտակարանցիները հեռացուց մինչեւ Ալ-Քիլայ բերդը⁽²⁵⁾, ու գրաւեցին քաղաքը, որուն իշխանն էր Վարդ Իպն Սաֆուան Աս-Սամի, որ Սամա Իպն Լիվայէն կը սերէր։ Անոնց հետ միացան զանազան սրիկաներ եւ ուրիշներ՝ Ալ-Քիլայ բերդին մէջ։

Մուհամմատ Իպն Սուլ անոնց դէմ զրկեց Սալըհ Իպն Սուլայի Ալ-Քիլայի, որ զիրենք պաշարեց եւ սպաննեց անոնցմէ շատերը⁽²⁶⁾։

Եագուպի, Բ. 429

20.

Ապուլ-Ապպաս՝ Ալ-Մանսուրը Հայաստանի կառավարիչ կը կարգէ

Ապուլ-Ապպաս՝ Միջագետքի, Մուսուլի, սահմանագլուխ երկիրներու եւ Ասորը-

(24) Մուսաֆըր, ինչպէս տեսանք, Իսհակ Իպն Մասլիմ Ալ-Ուզայլիի գործակալն էր. որով Ուսայիանց կողմէն նշանակուած՝ Աբրահան նոր հարստութեան հակառակորդ։

(25) Ալ-Քիլայ բերդը՝ Սիւնիքի մէջ էր. զայն կը յիշատակէ նաեւ Պէլլատհորի։

պատականի կառավարիչ կարգեց իր եղբայրը՝ Ապու Ճաֆարը (Ապու Ճաֆար Ալ-Մանսուր)։ Ասիկա զնաց մինչեւ Ռաքա, յօրինեց Ռաֆըքայի յաստակաւոր, Եփրատ գետին երեւոյթ. իսկ անոր ճարտարապետն եղաւ Աուհամ Իպն Մահրազ։ Այն ատեն Միջագետքի փոխանորդ կարգեց Ալ-Հասան Իպն Քահթապայ Աթ-Թալի. իսկ Հայաստանի վրայ կարգեց Եզիտ Իպն Ուսայտ Աս-Սուլամի, զոր յետոյ պաշտօնանկ ըրաւ եւ տեղը Հայաստանի վրայ փոխանորդ կարգեց Ալ-Հասան Իպն Քահթապայ, որ Ապուլ-Ապպասի առաջին օրերուն շարունակեց մնալ իր պաշտօնին վրայ⁽²⁷⁾։

Եագուպի, Բ. 430

21.

Ապու-Ճաֆար Ալ-Մանսուր եւ Հայերը

Ապու Ճաֆար Հայաստանի վրայ կառավարիչ կարգեց Եզիտ Իպն Հադըմ Ալ-Մուհալլային։ Այս վերջինը Եմէնցիները հոն (Ասորպատական) փոխադրեց Պասրայէն. ինք առաջինը եղաւ որ զանոնք փոխադրեց։ Ար-Րաուատ Իպն էլ-Մուհամմադ Ալ-Աղատին Թալիբէն Պըտտ⁽²⁸⁾ փոխադրեց, եւ Մուս Իպն Ալի Աթ-Թալի Նարիր (29) Համտանցին մինչեւ Մայիսնըճ, ու բաժնեց Եմէնցի ցեղա-

(26) Ղեւոնդ, ԻԸ. էջ 127-128։ ԼԲ. էջ 133։

(27) Ղեւոնդ, ԳԼ. ԼԱ. էջ 131։ Վարդան, Ի. էջ 75։

(28) Պըտտ՝ քաղաք մըն է Ասորպատականի մէջ։

(29) Հոս բնագրէն բառեր կորսուած են։

խումբը։ Նազարի ցեղախումբէն՝ Ասորը-պատականի մէջ մէկը չմնաց, բացի Աս-Սաֆար Իպն Ալ-Լէյթէ Ալ-Աղապի եւ անոր հօրեղբորորդիէն՝ Ալ-Պուսայ Իպն Հալպա⁽³⁰⁾։

Ասոր Ժամանակ խաղարները արշաւեցին Հայաստանի վրայ ու յարձակեցան Եզիտ Իպն Ուսայտ Աս-Սուլամիի վրայ։ Սա գրեց Ապու Ճաֆարի, իմացնելով որ Բաթ-Թարխան խաղարներու թագաւորը իր վրայ յարձակած է մեծ բազմութեամբ եւ վրայ յարձակած է մեծ բազմութեամբ է։ Թէ իր փոխանորդը փախուտ տուած է։ Ապու Ճաֆար զրկեց Ճապըիլ Իպն Շահա Ալ-Պուհալին զօրավարը՝ քսան հազար Սիւրիացի, Միջագետքի եւ Մուսուլցի զինուորներով, որոնք յարձակեցան. խաղարներու վրայ։ Իսլամներէն բազմութիւն մը սպաննեցաւ. իսկ Ճապըիլ եւ Եզիտ գացին Պըրս քաղաքը։ Երբ լուրը հասաւ Ապու Ճաֆարի՝ թէ խաղարները յաղթութիւն տարած են ու իսլամներու երկիրը մտած, Եթըր հազար հոգի հանեց բանտէրէն, ու ամէն երկրէ զօրահաւաք ընելով՝ զրկեց զանոնք զօրծաւորներուն եւ որմնադիրներուն հետ, ու չինել տաւ Կանադիրներուն հետ, ու զինել տաւ Կանադիրներուն հետ, Պուհալմատի, Պապ Ուսալ եւ ուրիշ շատ քաղաքներ՝ իսլամներու պաշտպանութեան համար։ Հոն բնակեցուց պաշտպանները, որոնք ետ մղեցին թշնամիները պատերազմով. իսլամները զօրացան այդ քաղաքներուն մէջ, զորս ընցուց նաեւ բնակիչներով։

Յետոյ Ծանարները արշաւեցին Հայաստանի վրայ. այն ատեն Ապու-Ճաֆար զրկեց Ալ-Հասան Իպն Քահթապան Հայաստանի վրայ՝ իր կառավարիչ։ Անոնց դէմ պատերազմեցաւ, բայց բաւական ոյժ չունենալով՝ նամակ գրեց Ապու-Ճաֆարի, թշնամիին բազմաթիւ ըլլալուն մասին։

(30) Արար ցեղախումբերու Ասորպատականի ու Հայաստանի մէջ թափանցելու եւ հոն բնակիլու մընալուն կերպով կը սկսի Ապու Ճաֆար Ալ-Մանսուրի Ժամանակ, ինչ որ նորութիւն է։

(31) Ղեւոնդ, ԼԲ. էջ 133-154։ Թոմա Արծրունի, տպ. Պետերբուրգ, 1887, ԳԼ. Ե. էջ 106։

սին։ Ապու-Ճաֆար անոր օգնութեան զրկեց Ամըր Իպն Իսմայիլ Ալ-Հարըթիին՝ քսան հազարով, որ հանդիպելով Ծանարներուն՝ սաստիկ պատերազմ մղեց։ Ճապատաւարտը տեւեց քանի մը օր. յետոյ Աստուած անոր յաղթութիւն պարգեւեց. մէկ օրուան մէջ անոնցմէ սպաննեց տասնեւեօթը հազար հոգի։ Յետոյ անցաւ դէպի Թիֆլիս, սպաննեց հետը եղած զերիները ու սկսաւ ամէն կողմ հետապնդել Ծանարները։

Ապու-Ճաֆար յետոյ Հայաստանի վրայ կառավարիչ կարգեց իր աղապարտ ստորուկը՝ Ուսայտը, որ մնաց Հայաստանի ու Ասորպատականի կառավարիչ Ապու Ճաֆարի խալիֆայութեան (754-775) ամբողջ շրջանին⁽³¹⁾։

Եագուպի, Բ. 446-447

22.

Հարուն Էր-Րաշիտ ու Հայաստան

Հայաստան ոտքի ելած էր Մահմուդ (775-785) մահէն վերջ, եւ շարունակեց ապստամբութիւնը Մուսայի (Մուսա էլ Հատիի (785-786) օրերուն։ Այն ատեն Ար-Րաշիտ (786-809) Հայաստանի կառավարիչ կարգեց իւր խաղաք Իպն խաղըմ Աղ-Դամիմին, որ հոն կեցաւ տարի մը եւ երկու ամիս, կարգ ու կանոն հաստատեց. երկիրը բարեփոխեցաւ ու բնակիչները հնազանդեցան։

Յետոյ Ար-Րաշիտ՝ իւր խաղաք Իպն խաղըմի տեղ կառավարիչ կարգեց Եուսըֆ Իպն Րաշիտ Աս-Սուլամին, որ Հայաստան բերաւ Նազար (Արար) ցեղախումբէն բազմութիւն մը։ Մինչեւ այն ատեն Հայաստանի մէջ տիրապետող էր Եմէնցիներու արար ցեղախումբը⁽³²⁾։ Նազար

(32) Պատմութեան մէջ Ար-Րաշիտ երկրորդն է որ Արար ցեղախումբեր Հայաստան կը բերէ ու հոն կը հաստատէ։ Ուսայիաները կը գոհանային միայն զինուորական գրաւումով, մինչ Արասեանները՝ Ապու-Ճաֆար Ալ-Մանսուր, Հարուն էլ-Րաշիտ եւ յաջորդ խալիֆաները, Արար գաղթա-

